



ՄիաՄանթո

Լոգանքը

Իր մարմինը սպիտակ էր...

Ինչպես է ձիւնն աստուածընծայ Տարոսներուն,

Եւ իր երկու աչքերուն մէջն ահաւոր՝

Բարբարոս սէր մը անյագուրդ կը վառէր:

Բայց սեւահեր այս գեղուիին ամուլ էր,

Ստինքները դեռ չոր էին մաքուր կաթէն,

Եւ իր կողերէն չեր ծնած այն պտուղը ազնուական կամ ոճրագործ,

Որուն համար բոլոր մայրերը կը սպասեն...:

Ու գինովութեամբ, բայց վայրապար կը ցանկանար

Այրութիւններ խոժոռադէմ եւ արգասանդ,

Բնութեան դէմ յաղթանակող:

Դաժանագեղ կնութիւնն այս կ'անգիտանար,

Թէ մեծ օրէնքը իր երկաթէ գաղտնիքն ունի...

Բայց կախարդուիի մը չարաշուք,

Աւերումի այս օրերս, իրեն ըսաւ.

Որպէսզի քու անլութիւնդ ադամանդեայ

Պայծառօրէն եւ առյաւէտ պտղատրուի...

Եկուր քեզի հին իմաստուն Դարերուն

Միակ դարմանը ես իմ ձեռքովս մատուցանեմ:

Եւ անգթութեան ասանդավէպը պատմեց...

Մինչ վիուկը գեղեցկուիւնն աչքերուն մէջ՝

Իր աչքերը շանթերու պէս, մոլեգնութեամբ մը կը մխրճէր:
Յետոյ բերին մեր հանդարտ գիւղէն հեռաւոր
Եօթը կոյսեր վեշտասանամեայ
(Ա՛հ, ճակատագիրնիդ կը տեսնեմ, որ եղերականօրէն նման է,
Ո՛վ խեղճ քոյրերս, այսչափ ատեն իմ մահերգած ճակատագրիս),
Այսպէս բերին մեր հանդարտ գիւղէն առաքինի եւ հեռաւոր՝
Եօթը կոյսեր վեշտասանամեայ՝ մահուան դողէն դողդոջուն,
Ներս մտցուցին զանոնք լոգարանի մը մարմարակերտ դուռներէն,
Ուր արդարութեան արեգակին ճաճանչները վերէն
Արցունքի պէս անոնց վրայ կ'անձրելին...:
Եւ շտապով տախտակէ տաշտ մը հոն դրին
Ու անոր շուրջը զարդարեցին շուշաններով սպիտակ,
Մինչդեռ հեռուն, վարագոյրի մը ետեւէն,
Կրօնաւոր մը մութ աղօթք մը կը կարդար...
Յանկարծ այսպէս՝ գեղեցկուհին զուարթութեամբ մը զարհուրելի,
Իր ոսկեհիւս շղարշները լայնածաւալ.
Իր ուսերէն իր նաժիշտին ուսերուն վրայ նետելով՝
Խաղաղութեամբ մը մերկացաւ...:

Մեւ դահիճները դաշոյններով շողարձակ
Անխղճօրէն խողխողեցին եօթը կոյսերը մեր գիւղին...
Եւ երբ ամուլ գեղեցկուհին, աշուրները դէպի երկինք,
Տաշտին մէջը արձանացած՝ ոտքի վրայ կանգնեցաւ,
Հայ կոյսերուն տաք արիւնը վարդակարմիր...
Սկսաւ իր մերկ եւ անխռով ոտքերէն
Մինչեւ իրեն ամուլ արգանդը բարձրանալ...